

Շամբուշ հովն աշնան՝ որ կը դըղդղէր  
Մոլեգին՝ հողին ընդերքն համօրէն:

Ճերմա՛կ գաղափար, ճերմա՛կ գաղափար,  
Աշնան մոլուցքէն դողահար հիմակ,  
Յամբո՛յր շուշանի, դիւթանք ձիւնեղէն,  
Փերթ փերթ լուսինկայ, ապրշում համակ:

Բե՛ր ինծի իղծիդ կաթը խանդաղատ:  
Մենաւո՛ր վարդեր, որ մելամաղծիկ  
Մառախուղներուն մէջ դեռ կը ժպտիք,  
Ապրեցէ՛ք հոգւոյս մէջ յաւերժօրէն:

## 10. ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ՇՈՒՔԻՆ ՏԱԿ

Ծաղիկներէն յուշիկ թերթեր կը թափէ  
Բուրումներով օծուն հովիկն իրիկուան,  
Յոգիներուն կ'իջնէ երազ մը բուրեան,  
Ի՛նչ հեշտին է մըթնշաղն այս սատափէ:

Աքասիաներ, գինով լոյսէ ու տապէ,  
Օրօրուելով մաքուր շունչ մը կը հեւան.  
Մինչ կը ձիւնէ ծաղիկն իրենց հոտեւան՝  
Չոր խօլաբար հովը գրկել կը շտապէ:

Ու լոյսն 1[1] անոնց, անխօս հուրի՛ դիւթական,  
Յըմայագեղ ու վարսքերով արծաթէ,  
Շատրըւանին կ'իջնէ գուռին մէջ կաթէ:

Ձուրը ցայտքէն ծաղիկ ծաղիկ կը կաթէ.  
Վըճիտ, ինչպէս լոյսէ արցունքը մանկան,  
Նըւագն անոր կը հեծեծէ հեշտական:

Ծաղիկներէն հովը թերթեր կը թափէ...

## 11. ԱՅԳԵՐԳ

Սարերուն մէջ կը կոծկոծի այգուն՝ կոչնակը վանքին,  
Եղնիկները մըթնշաղին դէպ ի գետափ կը դիմեն.